# Սոխակ ինչու դադրեցար
# Sokhak inch'u dat'rets'ar

1. Սոխակ ինչու դադրեցար
Քո անուշ երգ, քո անուշ երգ երգելուց,
*Որ քամում էր արտասուք,*
*Շատ իմ էրված,*
*Շատ իմ էրված աչերից:*

2. Միտըդ է, երբ ծագում է
Արշալույսը, արշալույսը գարնային,
*Քանի դու միտս բերիր իմ առարկան,*
*Իմ առարկան ցանկալի:*

3. Այն հիշատակն անուշ էր,
Ինչպես երազ, ինչպես երազ վաղանցիկ,
*Որ գեթ վայրկյան թըշվառին*
*Դարձնում էր նա,*
*Դարձնում էր նա երջանիկ:*

4. Համակ աշխարհ մոռացած,
Ունկըս քո ձեն, ունկըս քո ձենին հառած,
*Մտքով թռչում էի ես իմ հայրենին,*
*Ես իմ հայրենին կարոտած:*

1. Sokhak inch'u dat'rets'ar
K'o anush yerk', k'o anush yerk' yerk'eluts',
*Vor k'amum er artasuk',*
*Shat im ervats,*
*Shat im ervats ach'erits'.*

2. Mitət e, yerp' tsak'um e
Arshaluysə, arshaluysə garnayin,
*K'ani du mitəs berir im arrarkan,*
*Im arrarkan ts'ankali.*

3. Ayn hishatakn anush er,
Inch'pes yeraz, inch'pes yeraz vaghants'ik,
*Vor get' varkyan t'əshvarrin*
*Darts'num er na,*
*Darts'num er na yerjanik.*

4. Hamak ashkhar morrats'ats,
Unkəs k'o dzen, unkəs k'o dzenin harrats,
*Mət'k'ov tərrch'um ei yes im hayrenin,*
*Yes im hayrenin karotats.*